«ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՇԱՀԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ՕՏԱՐՎՈՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՄԱՑ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՉԱՓԻ ՎԻՃԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՏՈՒԿ ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՍԱՄԻՆԵ

Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի քաղաքացիական
իրավունքի և քաղաքացիական դատավարության
իրավունքի ամբիոնի հայցորդ

DOI: 10.63925/18294847-2026.blj22-11

Ամփոփագիր: Հոդվածում լուսաբանվում է «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ օտարվող սեփականության դիմաց՝ փոխհատուցման չափի վիճարկման վերաբերյալ հատուկ հայցային վարույթի գործերի դատավարական առանձնահատկությունները ՀՀ քաղաքացիական դատավարությունում:

Նշված ինստիտուտը ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքում ներդրվել է 2026 թվականին և առաջին անգամ գիտական ուսումնասիրության առարկա դարձել հեղինակի կողմից ներկայացվող վերլուծության մեջ:

Հոդվածում անդրարադարձ է կատարվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում ամրագրված՝ ՀՀ կառավարության որոշումը չկասեցնելու իրավակարգավորմանը՝ եզրահանգելով, որ փոխհատուցման չափի վերաբերյալ վեճի լուծումը չունի որևէ դերակատարում օտարման գործընթացում, մինչդեռ հանրության գերակա շահ ճանաչելու մասին Կառավարության որոշման կատարումը, ձեռքբերողի սեփականության իրավունքի գրանցումը կամ դրանից բխող այլ գործողությունները կասեցնելու օրենսդրական պահանջի նախատեսումը կհանգեցնի տնտեսվարող սուբյեկտների կողմից առաջարկվող փոխհատուցման չափի բարեխղճության՝ նկատի

ունենալով վերջիններիս շահագրգռվածությունը վեճի արագ լուծման և գործողությունների կասեցման սահմանափակումն արագ վերացնելուն, որպիսի պայմաններում առաջարկվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.21-րդ հոդվածում կատարել փոփոխություն՝ սահմանելով հանրության գերակա շահ ճանաչելու մասին Կառավարության որոշման կատարման, ձեռքբերողի սեփականության իրավունքի գրանցման կամ դրանից բխող այլ գործողությունները կասեցնելու դատավարական ընթացակարգ:

Բանալի բառեր: Հատուկ հայցային վարույթ, գերակա շահ, փոխհատուցման չափ, սեփականություն, օտարում:

Ներածություն

ՀՀ դատարաններում քաղաքացիական գործերի քննության հայցային վարույթն իրականացվում է քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված երկու ընթացակարգերով՝ հայցային և հատուկ հայցային: Օրենսդրական զարգացումների արդյունքում՝ հատուկ հայցային վարույթը լրացվեց նոր տեսակի քաղաքացիական գործերով [10]:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.4-րդ գլուխը նվիրված է «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ օտարվող սեփականության դիմաց փոխհատուցման չափի վիճարկման վերաբերյալ գործերին՝ որպես հատուկ հայցային վարույթի, որոնք ներպետական օրենսդրությամբ ամրագրվել են միայն 2026 թվականի փետրվարի 11-ին:

Նշված օրենսդրական փոփոխության արդյունքում հստակեցվել է հանրության գերակա շահ ճանաչելու հետևանքով օտարվող սեփականության փոխհատուցման չափի վիճարկման դատավարական ընթացակարգը՝ սահմանելով գործի քննության սեղմ ժամկետներ:

Հիմնական հետազոտություն

Հանրության գերակա շահի ապահովման նպատակով սեփականության օտարման հատուցելիության վերաբերյալ հիմնական իրավադրույթն ամրագրված է ՀՀ

Սահամադրության[1] 60-րդ հոդվածի 5-րդ մասում, ինչն ուղղակիորեն պաշտպանում է այն անձանց իրավունքները, որոնց սեփականությունը ճանաչվել է հանրության գերակա շահ:

Հատկանշական է, որ հանրության գերակա շահ ճանաչված սեփականության օտարման դիմաց փոխհատուցումը և փոխհատուցման չափն այն երաշխիքն է, որն անձանց տրված է ՀՀ օրենսդրությամբ, քանի որ սեփականատերերն իրենց կամքից անկախ հանգամանքներում զրկվում են սեփականությունից, որն օբյեկտիվ պատճառներով համարվում է գերակա շահ, որպիսի պայմաններում օտարված սեփականության դիմաց տրվող հատուցումը պետք է անհրաժեշտ և բավարար լինի համարժեք սեփականություն ձեռք բերելու համար, հետևաբար, փոխհատուցման չափի վերաբերյալ վեճերն առանձին դատավարական իրավակարգավորմամբ նախատեսելն արդարացված է և բխում է նաև միջազգային չափորոշիչներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի[2] 234.20-րդ հոդվածի համաձայն՝ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ օտարվող սեփականության դիմաց փոխհատուցման չափի վիճարկման վերաբերյալ գործերով հայցի առարկան կարող է լինել միայն «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով որոշված համարժեք փոխհատուցման չափի վիճարկումը: Սույն գլխով նախատեսված գործերով դատարանի քննության առարկա կարող է լինել միայն փոխհատուցման չափի համարժեքության հարցը:

Վերոգրյալ քաղաքացիադատավարական նորմի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ օրենդրությամբ հատուկ հայցային վարույթի շրջանակներում վեճի առարկա կարող է լինել բացառապես օտարվող սեփականության դիմաց փոխհատուցման չափը, որի համարժեք լինելու կամ չլինելու հանագամանքը հաստատում է իրավասու դատարանը, ինչն

[1]Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, ընդունվել է 06.12.2015թ., ուժի մեջ է մտել 22.12.2015թ., ՀՀՊՏ 2015.12.21 /Հատուկ թողարկում:

[2] Տե՛ս ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, ընդունվել է 09.02.2018 թ., ուժի մեջ է մտել 09.04.2018 թ:

ինքնանպատակ չէ, այլ ուղղված է անձանց գույքային իրավունքների պաշտպանությանը, և որը բխում է միջազգային չափորոշիչներից, քանի որ Հայաստանի Հանրապետության դեմ կայացված ՄԻԵԴ մի շարք վճիռներում Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է «նախնական և համարժեք փոխհատուցման» պահանջի իրավունքի խախտումներ, որոնք հանգեցրել են կամայական և անօրինական միջամտության:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներով արձանագրվել է, որ սեփականատերերին տրամադրված փոխհատուցումը, որը ներառել է շուկայական արժեքից 15 տոկոս ավել գումար, համաչափ չի եղել, քանի որ հաշվի չեն առնվել այն վնասները, որոնք կապված են եղել (ի թիվս այլոց) այդ սեփականության՝ որպես ապրուստի միջոց հանդիսանալու հետ:

Այսպես.

Շնող և Թեղուտ գյուղերում բնակիչների գյուղատնտեսական հողերը հասարակության և պետության կարիքների համար օտարվել են հանքարդյունաբերության նպատակներով, մինչդեռ օտարվող սեփականությունը եղել է գյուղացիների եկամտի միակ աղբյուրը[3]:

Բացի այդ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ կարող են լինել այնպիսի իրավիճակներ, երբ տվյալ անշարժ գույքի շուկայական գինն արտահայտող փոխհատուցումը՝ նույնիսկ օրենքով սահմանված լրացուցիչ տոկոսի ավելացմամբ, չհամարվի բավարար գույքից զրկելու դիմաց: Նման իրավիճակ կարող է առաջանալ այն դեպքում, երբ անձը զրկվում է իր եկամտի հիմնական, եթե ոչ միակ աղբյուրից, և առաջարկվող փոխհատուցումը չի համապատասխանում այդ կորստին[4]:

Եվրոպական մի շարք երկրների սեփականության օտարմանը վերաբերող ներպետական օրենսդրություններում օտարման դեպքում սեփականատերերի փոխհատուցումն իր մեջ ներառում է նաև օտարման արդյունքում պատճառված այլ

[3] Տե'ս ՄԻԵԴ «Ռամազյանն ընդդեմ Հայաստանի» վճիռ, թիվ 54769/10, 14.02.2019 թ., «Լևոն Ալիխանյանն ընդդեմ Հայաստանի» վճիռ, թիվ 4168/10, 14.03.2019թ., «Փարսադանյանն ընդդեմ Հայաստանի» վճիռ, թիվ 5444/10, 14.02.2019 թ., «Վարդանյանը և Հախվերդյանն ընդդեմ Հայաստանի» վճիռ, թիվ 4178/10, 14.02.2019 թ., «Մաշինյանը և Ռամազ յանն ընդդեմ Հայաստանի»վճիռ, թիվ 65124/09, 14.02.2019 թ., «Միեր Ալիխանյանն ընդդեմ Հայաստանի» վճիռ,թիվ 4413/10,14.02.2019 թ.:

[4] Տե'ս ՄԻԵԴ «Օսմանյանը և Ամիրաղյանն ընդդեմ Հայաստանի» վճիռ, թիվ 71306/11, 11.10.2018 թ.:

վնասները: Օրինակ՝ Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունում փոխհատուցումը նախատեսված է այնպիսի չափով, որ հնարավորություն ընձեռի սեփականատիրոջը ձեռք բերել նույնպիսի տեսակի և որակի գույք, ինչպես նաև ներառի սեփականատիրոջ բոլոր հավելյալ ծախսերը, որոնք նա կատարել է միանման այլ գույք ձեռք բերելիս, իսկ Շվեդիայի «Օտարման մասին» օրենքը նախատեսում է որպես փոխհատուցում սեփականության շուկայական արժեքին գումարած 25 տոկոս, ինչպես նաև սեփականատիրոջը պատճառած բոլոր վնասները[5]:

Վերոգրյալի հաշվառմամբ հարկ է փաստել, որ փոխհատուցման չափն առանձին դատական քննության առարկա դարձնելու հանգամանքն առանցքային գործիքակազմ է՝ սեփականատիրոջ իրավունքների երաշխավորվածությունն ապահովելու համար:

Միաժամանակ հարկ է փաստել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.21-րդ հոդվածում ամրագրված իրավակարգավորումը չի բխում հանրության գերակա շահ ճանաչված գույքի սեփականատերերի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության երաշխիքից այն հիմնավորմամբ, որ գույքի օտարման գործընթացում կարծես սեփականատիրոջ կամաարտահայտությունը որևէ նշանակություն չունի, քանի որ, անկախ սեփականատիրոջ համաձայնությունից, այն ենթակա է օտարման:

Օրենսդիրը նախատեսել է ՀՀ կառավարության որոշումը չկասեցնելու իրավակարգավորում, որն ամրագրված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի[6] 234.21-րդ հոդվածով, ինչը նշանակում է, որ փոխհատուցման չափի վերաբերյալ վեճի լուծումը չունի որևէ դերակատարում օտարման գործընթացում, մինչդեռ հանրության գերակա շահ ճանաչելու մասին Կառավարության որոշման կատարումը, ձեռքբերողի սեփականության իրավունքի գրանցումը կամ դրանից բխող այլ գործողությունները կասեցնելու օրենսդրական պահանջի նախատեսումը կհանգեցնի

[5] Տե՛ս Winrich Voss, Compulsory Purchase in Poland, Norway and Germany, 2010, Thomas Kalbro, Compensation Rights for Reduction in Property Values Due to Planning Decisions in Sweden, Washington University Global Studies Law Review, 027 (2007).

[6] Տե՛ս ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, ընդունվել է 09.02.2018 թ., ուժի մեջ է մտել 09.04.2018թ:

տնտեսվարող սուբյեկտների կողմից առաջարկվող փոխհատուցման չափի բարեխղճության՝ նկատի ունենալով վերջիններիս շահագրգռվածությունը վեճի արագ լուծման և գործողությունների կասեցման սահմանափակումն արագ վերացնելուն, հետևաբար, առաջարկվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի[7] 234.21-րդ հոդվածը խմբագրել հետևյալ կերպ՝ «Հանրության գերակա շահ ճանաչելու որոշման և գույքի օտարման հետ առնչվող որևէ այլ հայց ներկայացնելը կասեցնում է հանրության գերակա շահ ճանաչելու մասին Կառավարության որոշման կատարումը, ձեռքբերողի սեփականության իրավունքի գրանցումը կամ դրանից բխող այլ գործողությունները, հանրության գերակա շահի ապահովման նպատակով սեփականության օտարման հիմք հանդիսացող գործունեությունը՝ մինչև դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը»:

Միաժամանակ հարկ է արձանագրել, որ նման իրավակարգավորումը ողջամտորեն չի հանգեցնի բացասական կամ անդառնալի հետևանքների՝ նկատի ունենալով ՀՀ օրենսդրությամբ ամրագրված հատուկ հայցային վարույթի քննարկվող տեսակի դատավարական սեղմ ժամկետները:

Անդրադառնալով նշված հատուկ հայցային վարույթի հաջորդ դատավարական առանձնահատկությանը՝ հարկ է նշել, որ նույն օրենքի 234.19-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորմամբ նախատեսվել է, որ փորձագետ կարող է ներգրավվել միայն «Գնահատման գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով որպես գնահատող հանդես գալու իրավունք ունեցող անձը՝ բացառությամբ օտարվող արժեթղթերի, որոնց դեպքում որպես փորձագետ կարող է ներգրավվել միայն «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ անկախ գնահատողը, սակայն ՀՀ օրենսդրությամբ չի հստակեցվել փորձաքննություն նշանակելու դատավարական ընթացակարգը, մասնավորապես, սույն քաղաքացիական գործերով փորձաքննություն նշանակվում է

[7] Տե՛ս ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, ընդունվել է 09.02.2018 թ., ուժի մեջ է մտել 09.04.2018 թ:

հայցվորի միջնորդության հիման վրա, թե դատարանի նախաձեռնությամբ, որպիսի պայմաններում առաջարկվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը լրացնել այն բովանդակությամբ, որ իրավասու դատարանին վերապահվի պարտականություն իր նախաձեռնությամբ նշանակել փորձաքննություն՝ միաժամանակ որոշմամբ սահմանելով փորձաքննության կատարման ժամկետը, ինչը կկանխի փորձաքննության ձգձգման հետևանքով դատավարական ժամկետների ձգձգումը և արդար դատաքննության իրավունքի իրացման առնչությամբ կդառնա արդյունավետ երաշխիք դատավարության բոլոր կողմերի համար:

Եզրակացություն

Այսպիսով՝ կարող ենք եզրահանգել, որ «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ օտարվող սեփականության դիմաց որպես հատուկ հայցային վարույթի ներդրումը ՀՀ իրավական համակարգ ունի էական նշանակություն և ուղղված է հանրության գերակա շահ ճանաչված գույքի սեփականատերերի իրավունքների և օրինական շահերի նվազագույն պաշտպանությանը:

Առաջարկվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.21-րդ հոդվածի խմբագրման արդյունքում հանրության գերակա շահ ճանաչելու մասին Կառավարության որոշման կատարումը, ձեռքբերողի սեփականության իրավունքի գրանցումը կամ դրանից բխող այլ գործողությունները կասեցնելու դատավարական ընթացակարգ, ինչը լրացուցիչ երաշխիք կլինի սեփականատերերի իրավունքների արդյունավետ պաշտպանությունն ապահովելու համար:

ПРОЦЕССУАЛЬНЫЕ ОСОБЕННОСТИ РАССМОТРЕНИЯ ДЕЛ ОСОБОГО ИСКОВОГО ПРОИЗВОДСТВА ОБ ОСПАРИВАНИИ РАЗМЕРА КОМПЕНСАЦИИ ЗА ОТЧУЖДЕННОЕ ИМУЩЕСТВО ПО ЗАКОНУ РА «ОБ ОТЧУЖДЕНИИ ИМУЩЕСТВА В ЦЕЛЯХ ОБЕСПЕЧЕНИЯ ПРИОРИТЕТНЫХ ИНТЕРЕСОВ ОБЩЕСТВА» В ГРАЖДАНСКОМ ПРОЦЕССЕ РА.

ПЕТРОСЯН САМИНЕ

Соискатель кафедры гражданского и
гражданско-процессуального права
Российско-Армянского (Славянского) Университета

Аннотация. В статье освещаются процессуальные особенности специального искового производства по оспариванию размера компенсации за отчуждаемое имущество, установленной законом Республики Армения «Об отчуждении имущества в целях обеспечения приоритетных общественных интересов» в гражданском судопроизводстве РА.

Указанный институт был введен в Гражданский процессуальный кодекс РА в 2026 году и впервые стал предметом научного исследования в анализе, представленном автором.

В статье говорится о закрепленном в Гражданском процессуальном кодексе РА правовом регулировании решения правительства РА не приостанавливать действие решения, заключив, что разрешение спора о размере компенсации не играет никакой роли в процессе отчуждения, в то время как выполнение решения правительства о признании приоритетного общественного интереса, предусмотрение законодательного требования о приостановлении регистрации права собственности приобретателя или вытекающих из нее других действий приведет к добросовестности размера компенсации, предлагаемой хозяйствующими субъектами, с учетом заинтересованности последних в быстром разрешении спора и быстрой отмене ограничения на приостановление действий. При таких условиях было предложено внести изменение в статью 234.21 Гражданского процессуального кодекса РА, определяющее выполнение решения правительства о признании приоритетного общественного интереса, регистрации права собственности приобретателя или приостановления других действий, вытекающих из этого.

Ключевые слова: конкретное исковое производство, преимущественная выгода, размер компенсации, собственность, отчуждение

PROCEDURAL FEATURES OF SPECIAL CLAIM PROCEEDINGS CONCERNING DISPUTES OVER THE AMOUNT OF COMPENSATION FOR ALIENATED PROPERTY UNDER THE LAW OF THE REPUBLIC OF ARMENIA "ON ALIENATION OF PROPERTY FOR THE PURPOSE OF ENSURING THE OVERRIDING PUBLIC INTEREST"

PETROSYAN SAMINE

Applicant at the Chair of Civil Law and Civil Procedure Law,
Russian-Armenian (Slavonic) University

Abstract. The article examines the procedural features of special claim proceedings concerning disputes over the amount of compensation for property subject to alienation under the Law of the Republic of Armenia "On Alienation of Property for the Purpose of Ensuring the Overriding Public Interest," under the civil procedure of the Republic of Armenia.

This legal institution was introduced into the Civil Procedure Code of the Republic of Armenia in 2026, and the present article constitutes its first scientific research.

The article covers the legal framework established by the Civil Procedure Code of the Republic of Armenia, under which the Government's decision is not subject to suspension. The article concludes that the resolution of disputes concerning the amount of compensation has no bearing on the alienation process itself. At the same time, establishing a statutory requirement to suspend the implementation of the Government's decision recognizing the overriding public interest, the registration of the acquirer's ownership right, or other actions arising therefrom would encourage business entities to offer compensation in good faith, given their interest in the rapid resolution of disputes and the swift lifting of restrictions on such actions.

In light of these considerations, the article proposes amending Article 234.21 of the Civil Procedure Code of the Republic of Armenia to establish a procedural mechanism for suspending the implementation of the Government's decision recognizing the overriding public interest, the registration of the acquirer's ownership right, or other actions arising therefrom.

Key words: special claim proceedings, overriding public interest, amount of compensation, property, alienation.

Օգտագործված գրականության ցանկ.

1. ՀՀ Սահմանադրություն, ընդունվել է 06.12.2015թ., ուժի մեջ է մտել 22.12.2015թ.:

2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, ընդունվել է 09.02.2018թ., ուժի մեջ է մտել 09.04.2018թ:

3. ՄԻԵԴ «Ռամազ յանն ընդդեմ Հայաստանի» վճիռ, թիվ 54769/10, 14.02.2019թ.:

4. ՄԻԵԴ «Լևոն Ալիխանյանն ընդդեմ Հայաստանի» վճիռ, թիվ 4168/10, 14.03.2019թ.:

5. ՄԻԵԴ «Փարսադանյանն ընդդեմ Հայաստանի» վճիռ, թիվ 5444/10, 14.02.2019թ.:

6. ՄԻԵԴ «Վարդանյանը և Հախվերդյանն ընդդեմ Հայաստանի» վճիռ, թիվ 4178/10, 14.02.2019 թ.:

7. ՄԻԵԴ «Մաշինյանը և Ռամազ յանն ընդդեմ Հայաստանի»վճիռ, թիվ 65124/09, 14.02.2019թ.:

8. ՄԻԵԴ «Միեր Ալիխանյանն ընդդեմ Հայաստանի» վճիռ,թիվ 4413/10,14.02.2019 թ.:

9. ՄԻԵԴ «Օսմանյանը և Ամիրաղ յանն ընդդեմ Հայաստանի» վճիռ, թիվ 71306/11, 11.10.2018 թ.:

10. Ա. Դավթյան, Քաղաքացիական դատավարություն, արդի հիմնախնդիրներն ու զարգացման ուղիները, Երևան, 2024թ.:

11. Карпова А.А., Процессуальные особенности рассмотрения дел о признании сделок недействительными и применении последствий недействительности сделок в цивилистическом процессе, М. 2024.

12. Winrich Voss, Compulsory Purchase in Poland, Norway and Germany, 2010.

13. Thomas Kalbro, Compensation Rights for Reduction in Property Values Due to Planning Decisions in Sweden, Washington University Global Studies Law Review, 027 (2007).